# «Աուդիտ» մագիստրոսական ծրագիր

| *Ընդհանուր տեղեկություն* |
|---|
| «Աուդիտ» մասնագիտացումը 1,5 տարի տևողությամբ մագիստրոսական ծրագիր է, որի նպատակն է պատրաստել աուդիտորի գիտելիքներով, կարողություններով և հմտություններով օժտված մասնագետներ, որոնք կարող են՝<br>• Իրականացնել աուդիտի գործառույթները և այդ գործընթացում կայացնել որոշումներ,<br>• Լսել այլ տեսակետներ և քննարկել դրանք,<br>• Աշխատանքի ընթացքում կիրառել ստեղծագործական մոտեցում:<br>Մագիստրոսը կտիրապետի աուդիտի բնագավառին առնչվող միջազգային չափանիշներին համապատասխան համակողմանի, մասնագիտացված, գործնական և տեսական գիտելիքների, որոնք անհրաժեշտ են աուդիտորական գործունեության ընթացքում նոր հայեցակարգերի և սկզբունքների մշակման, ինչպես նաև աուդիտի ոլորտում առանցքային նշանակություն ունեցող գիտելիքների մասին տվյալների ու տեղեկությունների հավաքման համար:<br>Մասնագիտացված հմտությունների դիտակետից մագիստրոսը ձեռք կբերի հաղորդակցման, վերլուծական և կազմակերպչական հմտություններ, ինչպես նաև հաշվառման և աուդիտի ոլորտում նորարարության, նոր գիտելիքների ու ընթացակարգերի մշակման, պահանջվող մեթոդների ու մոտեցումների ընտրության և մասնագիտացման ոլորտում անցկացված գործողությունների երկարաժամկետ ու կարճաժամկետ արդյունքների գնահատման կարողություններ, համակարգչային և տեղեկատվական տեխնիկայից ազատորեն օգտվելու գործնական հմտություններ, հայտնի ծրագրային փաթեթների գործնական տիրապետում:<br>Կարողությունների դիտակետից մագիստրոսը միջավայրի փոփոխության պայմաններում պետք է կարողանա իրականացնել ինչպես հաշվավերլուծական, այնպես էլ աուդիտորական աշխատանքների կազմակերպում, այդ թվում՝ աշխատանքների պլանավորում և գործընթացի կառավարում, և դրանց վերջնարդյունքների ներկայացնում շահառուներին: Օտար լեզվով կարող է կազմել հստակ կառուցվածք, աուդիտի թեմայի վերաբերյալ տեքստ, նկարագրել այդ գործընթացում ձևավորված փորձն ու իրադարձություններ, ներկայացնել իր կարծիքների և նպատակների հիմնավորումները:<br>Կրթական ծրագրի շրջանակներում դասավանդման գործընթացը հիմնականում կառուցվում է ուսանողակենտրոն մոտեցման հիման վրա: Ընտրված դասավանդման մոտեցման արդյունավետության ապահովման, ինչպես նաև կիրառական և գործնական հմտությունների փոխանցման նպատակներով, կարևորվում է ծրագրում |

ընդգրկված պրոֆեսորադասախոսական անձնակազմը, որի մոտ 40 տոկոսը տնտեսության աուդիտի ոլորտում աշխատող ղեկավար աշխատակիցներ են, որոնց դասավանդման փորձը գերազանցում է **5** տարին:

Մասնագիտական ծրագրի ենթանպատակներից բխող հիմնական ուղղվածություններն են՝

- վերահսկողությունը և աուդիտը
- աուդիտի հիմնախնդիրներ
- կառավարչական հաշվառումը և վերահսկողությունը
- հաշվապահական փորձաքննության հիմնախնդիրներ
- ռիսկի վրա հիմնված վերահսկողությունը
- աուդիտի միջազգային ստանդարտները
- ներքին վերահսկողության միջազգային համակարգեր
- ֆինանսական և կառավարչական վերլուծություն:

Ծրագիրն իր մեջ ներառում է տնտեսագիտության տեսության, հաշվապահական հաշվառման, իրավագիտության, ֆինանսերի, կառավարման, վիճակագրության և այլ ոլորտների վերաբերյալ իմացություն, որոնք կձևավորեն համապատասխան հիմնարար մտածողություն:

Ծրագրի բարեհաջող ավարտին կտրվի տնտեսագիտության մագիստրոսի որակավորում:

## *Մասնագիտության նկարագիր*

«Աուդիտ» մասնագիտացման անհրաժեշտությունը բխում է տնտեսական հարաբերություններում մասնագիտության նկատմամբ տնտեսության և հասարակության պահանջարկից, մասնավորապես հանրային շահերի պաշտպանության առանձնահատկությունները պարտադրում են տնտեսության կայունություն և հուսալիություն, իսկ այդ գործառույթը պետության կողմից հիմնականում պատվիրակվում է աուդիտորական ընկերություններին, որոնք իրենց կողմից տրված եզրակացության միջոցով հանրությանը հավստիացնում են աուդիտ անցած ընկերության ֆինանսական հաշվետվությունների նկատմամբ իրենց մասնագիտական դիրքորոշումը: Ներկայացված դիրքորոշման հիման վրա տնտեսվարող սուբյեկտները և/կամ հասարակությունը կառավարում է իր համապատասխան ռիսկերը: Ինչպես նաև ցանկացած տնտեսվարող սուբյեկտի անխտիր բոլոր հնարավոր հաճախորդներին միավորում է մեկ ընդհանուր ու թերևս կարևորագույն պահանջ՝ կազմակերպությունները պետք է լինեն հուսալի և կառավարելի: Տնտեսվարող սուբյեկտների հուսալիությունը հիմնականում պայմանավորված է ներքին վերահսկողության համակարգի բավարար արդյունավետությամբ, իսկ այդ համակարգի անխափան գործունեության հիմնական երաշխավորողը հանդիսանում է Ներքին աուդիտի ինստիտուտը: Այժմ ներկայացնենք աուդիտի մասնագիտության նկատմամբ սահմանված ՀՀ օրենսդրության պահանջները:

- ՀՀ ֆինանսական կազմակերպությունների (բանկերը, վարկային կազմակերպությունները, ներդրումային ընկերությունները, ապահովագրական ընկերությունները և այլն) ֆինանսատնտեսական գործունեությունը յուրաքանչյուր տարի պետք է ենթարկվի աուդիտորական ստուգման՝ աուդիտն իրականացնող անձի կողմից, ինչպես նաև ՀՀ ֆինանսական կազմակերպությունները պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ չորսամսյա ժամկետում, հրապարակել տարեկան ֆինանսական հաշվետվությունները և աուդիտային եզրակացությունը, իսկ վարկային կազմակերպությունների նկատմամբ նշված ժամկետը սահմանված է վեց ամիս:
- Կապիտալի շուկայում արժեթղթի վաճառքի ազդագրում (Օֆերտա) ներառվող ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկությունների ճշգրտությունը և լիարժեքությունը հավաստվում է անկախ աուդիտորական եզրակացությամբ: Այսինքն՝ կապիտալի շուկայի գործունեության հիմնական նախապայմաններից է Արժեթուղթ թողարկողների կողմից հանրությանը արժանահավատ տեղեկատվության ապահովումը, որի երաշխավորողը հանդիսանում է աուդիտը:
- Համաձայն ՀՀ օրենսդրության Արտաքին աուդիտի հաստատման իրավասությունը պատկանում է ընկերության կառավարման բարձագույն մարմնին՝ մասնակիցների ժողովին: Աուդիտ իրականացնող անձին ՀՀ օրենսդրությամբ տրվում է հնարավորություն մասնակցելու Մասնակիցների ժողովին /ԲԲԸ մասին ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 1-րդ կետի ե ենթակետ/, ընդ որում ներկայացնելով եզրակացություն մասնակիցների ժողովին /օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ կետի բ ենթակետ/:

Նշված փաստը վկայում է պետության կողմից աուդիտի դերի կարևորումը:

***Աշխատանքի հնարավորություններ***

Աշխատաշուկայում «Աուդիտ» մասնագիտությունը ունի բարձր պահանջարկ, ինչի մասին վկայում են աշխատաշուկային սպասարկող աշխատանքի հայտարարությունների հիմնական կայքերում՝ տվյալ մասնագիտության թափուր աշխատատեղերի քանակը և տեսակարար կշիռը այլ մասնագիտությունների համեմատ:

Տվյալ ոլորտի ամենապահանջված հաստիքներից են՝

1. աուդիտոր,
2. գլխավոր ներքին աուդիտոր,
3. աուդիտորի օգնական,
4. աուդիտի վարչության օգնական,
5. ֆինանսական վերահսկող,
6. կառավարչական ռիսկերի վերլուծաբան
7. հաշվապահ-աուդիտոր

Թափուր աշխատատեղերի մշտադիտարկման հիման վրա վերլուծվել և ընդհանրացվել են գործատուների կողմից նշվող պոտենցիալ աշխատակիցների հիմնական պարտականությունները տվյալ ոլորտի մասնագետների նկատմամբ: Մագիստրոսի որակավորում ստացած անձը կարող է աշխատել որպես աուդիտոր, ինչպես արտաքին աուդիտորական ընկերություններում, այնպես էլ կորպորատիվ ընկերություններում և ոչ առևտրային ընկերություններում, որպես ներքին աուդիտոր, վերստուգող կամ վերլուծաբան:

Կրթական ծրագրի շրջանավարտը արտաքին աուդիտորական ընկերություններում և/կամ կորպորատիվ ընկերություններում հիմնականում կարող են զբաղեցնել.

- Աուդիտորական ընկերություններում աուդիտի ղեկավար և/կամ անդամ:
- Ներքին աուդիտի ղեկավարի կամ անդամի աշխատատեղը:
- Բաժնետիրական ընկերությունում Վերստուգող և/կամ վերստուգիչ հանձնաժողովի նախագահ կամ անդամ:
- Բաց բաժնետիրական ընկերություններում Աուդիտ կոմիտեի անդամ: